ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունվարի 2021 թվականի N 18 – Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2021 թվականի հունվարի 14-ի N 6-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2021 թվականի հունվարի 26-ին ներկայացված N 3 արձանագրությունը

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմական գործողությունների հետևանքով Արցախի Հանրապետությունում զոհված Գարիկ Վաչագանի Բեգլարյանի, Խորեն Հրանտի Ալեքսանյանի, Մելիք Սամվելի Մերելյանի, Գրիշա Գագիկի Ազատյանի, Գեորգի Արտեմի Մանուչարյանի և Մելիք Ռոբերտի Աթոյանի հուղարկավորման ծախսերի փոխհատուցման նպատակով փոխանցել՝ 406 /չորս հարյուր վեց/ հազար դրամ <<Եդեմ 1>> ՍՊԸ-ին, 75 /յոթանասունհինգ/ հազար դրամ <<Հայկ Սարդարյան>> ԱՁ-ին և 140 /մեկ հարյուր քառասուն/ հազար դրամ <<Սամվել Էվիենյան>> ԱՁ-ին:

2. Մարզպետարանի աշխատակազմի գլխավոր քարտուղարին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով ապահովել գումարների վճարումը:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

27.01.2021

X

2021թ. հունվարի 26
ք.Իջևան